Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 52 — 14 ՀՈԿՏ. 1900 ՇԱԲԱԹ ԿԻՍՕՐ — Oct. 14. VOL. No. 52

ԲԱԺՆԵԳԻՆ
Մ. ՆԱՀԱՆԳԱՅ ՀԱՄԱՐ
Տարեկան $1.50
Վեցամսեայ 0.85
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան 10 Ֆրանք
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Խմբագրութեան ղրկուած նամակ կամ ծրար եւ չեն վերադարձուիր

ԳԻՆ 3 ՍԷՆԹ.



ՉԱՅՆ Հայրենեաց

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՍՑԷ
AMERICAN HAI PUBLISHING Co
8 Bennet Street,
BOSTON, MASS.

Entered at the Post Office, at Boston, as Second - Class Mail Matter.

Subscription $1.50 a Year.

ՏՈՔԹՈՐ ՀԱՄԼԻՆ

Ամերիկեան Պորտի Միսիոնարութեան մեծ ծերունին, մեծ Ամերիկացի մը եւ Հայոց մեծ բարեկամներէն մին Տօքթոր Համլին մեռաւ Զայն-Հայրենեացի վագանէին մէջ. ու չկրցինք ժամանակին այդ մեծ կորուստը գուժել մեր սիրելի ընթերցողներուն։

Ամէն բանէ առաջ պարտինք երկու խօսք ըսել Հայոց մէջ Տօքթոր Համլինի դէմ կազմուած աննպաստ կարծիքի մասին։ Նա Հայոց յեղափոխական շարժմանց ծանր հակառակորդ և խիստ քննադատ մի հանդիսացած էր, նա չէր կրնար տեսնել, չէր կրնար հաւատալ թէ Հայկական յեղափոխութիւն մը իր առաջ բերելիք ահռելի արհաւիրքներէն կրնար որևէ հիմնական բարիք ծնանիլ ազգին։

Այս տողերը գրողը ինք՝ Պօսթօն գումարեալ ժողովի մը մէջ, Տօքթոր Համլինի հետ Հայկական յեղափոխութեան մասին խիստ վիճաբանութեան բռնուած ու անձնապէս անկէ ծանր վնաս կրած է. սակայն մեր հայեացքներու տարբերութիւնը մեզի պատճառ տուած չէ որ Հայոցս այդ մեծ բարերարին ու բարեկամին հայասիրութեան լայնութիւնն ու խորութիւնը անտես առնենք։

Այո. Տօքթոր Համլին խիստ ծանր հարուածներ իջեցուցած է Հայոց յեղափոխական հաւատքին, սակայն շատ աւելի ծանր եղած են անոր հարուածները Սուլթանին ու Թիւրք կառավարութեան գլխին։ Տօքթոր Համլին ամէն առիթէ օգտուելով Հայոց փաստին ամենամեծ ու հզօր ջատագովներէն մին հանդիսացած էր, մանաւանդ վերջին կոտորածներէն ասդին։

Տօքթոր Համլին սերած է Ֆրանսական արիւնէ. Ֆրանսական Բողոքական Հիւկընոթներու մէկ զաւակն էր, որ մեռաւ ի հասակի 89 ամաց։

1840 ին Ամերիկեան Պորտի կողմանէ Պոլիս կերթայ իբր հայ երիտասարդաց միսիոնար դաստիարակ։ Հոն կը հիմնէ Պեպէքի ճեմարանը, ուրկէ ելած են հայ բողոքականաց ամենէն կարող և օգտաշատ անձնաւորութիւնները և ոչ նուազ Հայաստանեայց եկեղեցիին պատկանող անձնաւորութիւններ, որոց մէջ են Ստեփան փաշա Արսլանեան և Եպիսկոպոս մը։

Հռովմի Պապը շատ վրդոված էր բողոքականութեան Հայոց մէջ մուտք գտնելը տեսնելով, ու անոր դէմ արգելքներ յարուցանելու դիտումով Պոլիս կը ղրկէ հայագէտ Էօժէն Պօրէ, որ Պեպէքի ճեմարանին դէմ կը հիմնէ Պապական վարժարան մը, և սակայն չկրնալով ընդ երկար մրցիլ՝ կը փակէ զայն ու կը վերադառնայ Հռովմ։

Տօքթոր Համլին Պորտի միսիոնարութեան մէջ Հայոց բարձր դաստիարակութիւն մը տալու գաղափարին առաջին ջատագովը եղած է, որուն ընդդիմացած է Պորտ Ընկերութիւնը եւ պահանջած՝ որ Տօքթոր Համլինի կազմած գիտական բարձր և ընդարձակ ծրագիրը սեղմուի և իջեցուի անձուկ սահմանի մը։ Տօքթոր Համլին ոգի ի բուին կը հակառակի Պորտի սոյն պահանջին ու երբ կը տեսնէ որ առաջինը անդրդուելի կը կենայ իր պահանջին վրայ, իր յարաբերութիւնը կը խզէ Պորտէն և Նիւ-Եորքցի Մր. Քրիստաքոր Ռոպերթ անուն հարուստ վաճառականի մը ձեռնտուութեամբ կը հիմնէ Ռոպերթեան Գոլէճը, որ Թիւրքիոյ մէջ քաղաքային ազատութեան մեծ վառարանը եղաւ, ինչպէս և գիտական նոր հոսանքին։

Պուլկար ազգը գիտէ թէ իր քաղաքային ազատութեան ու մտաւորական զարգացման մէջ ի՛նչ կը պարտի Ռոպերթեան Գոլէճին։ Պուլկարիոյ Պետական անձերուն ստուար մասը սոյն հաստատութեան սաները կազմած են։ Հայերուս ազգային, գիտական և նոյն իսկ յեղափոխական հոսանքին ծագումը. թափը և աճումը մեծ չափով կը պարտինք ինչպէս յիշած ենք, Պեպէքի ճեմարանին։ Թրքա-Հայոցս երբեմի թրքախառն, ազատատեալ, աղճատեալ ու խեղեալ հայերենին զտուելուն եւ մաքրուելուն խանձարուրը կը կենայ Պեպէքի ճեմարանին մէջ. հոն Տօքթոր Համլին կորոշէ որ թէ ինք և թէ իր աշակերտները գրեն և խօսին զուտ Հայերենով. այս բարի ազդեցութիւնը կը տարածուի առ հասարակ ընդհանուր հայոց մէջ. բարերար խթանը կը շարժի. ու հայերէնը յստակելու և զտելու բարերար նախանձը կը բորբոքի ամէն խաւերու մէջ։ Բողոքական հայոց ամենէն լաւ Հայկաբանները, Պատ. Մարտիրոս Շմաւոնեան, Պատ. Սիմոն Դաւթեան, Փրոֆ. Մելքոն, Փրոֆ. Ճեճիգեան, Պատ. Սիմոն Կիւրճեան՝ «Գիտակ»ի Խմբագիր. Արմենակ Հայկունի «Իմ Հայրենիք դիս կը կանչէ» երգին հեղինակը, Պատ. Ստեփան Իւթիւճեան՝ «Բիւրակն»ի Խմբագիր, ևն, ևն. բոլորն ալ Պեպէքի աշակերտներէն են, և ո՞ր հայ աւելի հայրենասէր, աւելի խանդավառ ազգասէր եղած է քան «Սիրէ հայը»ի հեղինակ Պատ. Մարտիրոս Շմաւոնեան. քան «Իմ հայրենիք դիս՝ կը կանչէ»ի հեղինակ Արմենակ Հայկունի։ Խարբերդցիները, Խարբերդի դպրոցներուն սաները, Խարբերդի ազգասէր երիտասարդները գիտեն թէ ի՛նչ ներշնչութիւն ստացեր են Շմաւոնեան «Պապա»ին հայրենասիրավառ խօսքերէն, թէ անոր հայերենի դասատուութեան ատեն, մեր շարադրութիւններուն մէջ հայրենասիրական թռթռումներուն երբ նա կուսկնդրէր, գլուխը երկու ձեռքերուն մէջ բռնած ու կախ, առաջևի տախտակամածը իր արցունքովը կը թրջէր, հոն այդ արցունքներէն ի՞նչ կայծեր կը բարձրանային եւ մեր պատանեկան սրտերը կը հրդեհէին սրբազան հուրով։

Կը յիշեմ թէ երբ Խրիմեան Հայրիկ վերջին անգամ Վանէն Պոլիս կերթար, ճամբուն վրայ իրեն նամակ մը հասաւ Պատ. Սիմոն Դաւթեանէ, որուն մէջ ի միջի այլոց կըսէր, «Հայրիկ! քու բոլոր ազդեցութիւնդ ի գործ դիր հալէ՛ իր հողին վրայ պահելու, աւելի կընտրեմ որ հայը իր կինը քիւրտին շոշափել տայ՝ քան թէ իր հողը. հայուն յոյսը իր հողին վրայ հողին տէր կանգնելուն մէջ կը տեսնեմ»։

Հայ բողոքականութեան պատմութեան ծանօթ եղողներն գիտեն թէ Պեպէքի դպրոցէն ընթացաւարտներ ի՛նչ հայրենասիրական հոսանք ստեղծեր են հայ բողոքականութեան մէջ։ Հայ բողոքականներու մէջ դէպի իրենց մայրենի եկեղեցին ինչ որդիական սէր ու ակնածանք որ ծնունդ առած է կը պարտինք Պեպէքէն ընթացաւարտ եղող կարգ մը հովիւներու. մինչ խակ կրթութեամբ դուրս եկած բողոքական կղերներ ջանացած են՝ ընդհակառակն, հայ բողոքականը գրգռել և գինել իր մայրենի եկեղեցիին դէմ։

Տօքթոր Համլին կը սիրէր հայերը իրենց արժանիքը ճանչնալով. իր սէրը հիմնուած էր այն իրողութեան վրայ թէ կրնաս վստահիլ հայուն թէ խելքին և թէ բարքին, իր այս սիրոյն իբր առհաւատչեայ կտակած էր որ իր դագաղը կրեն հայեր։ Եւ ուրախ ենք ըսելու թէ Հայոցս համար այդ գնահատելի կտակը կատարուած է պատշաճօրէն. դագաղակիրքը եղած են, Փրոֆ. Մելքոն, Տօքթ. Կայծակեան, Տօք. Թամինոսեան, Տիարք Գ. Գալէմքէրեան, Գարեգին Կիրակոսեան Մ. Կիւլէզեան, Յ. և Պ. Առաքելեան եղբարք և ուրիշ հայ կոչեցեալ մը։

ԱՆԲԱՂԴ ՄԱՐՕԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Հաղարից մինը)

—o—

Ուրիշ շատ անգամների պէս կիրակի մը էլի մեր տան քանիմ, ծանօթ ու բարեկամ կիների ժողովատուք կար հոն որոնց մէջն էր և Մարոն. միշտ իր հաճոյակատար ծառայութիւններով և զուարթախօսութիւններով ուշագրաւ. հոն և իր մանկիկ—խորհրդաւոր բիճը—որ միշտ ճանցրացնում էր իր դեռատի մօր. և իրա հանգիստ ղինք սիրող մօրը լիք և հարուստ կուրծքին վրայ միայն կը գըտնէր։

Ճաշից վերջ ամենին էլ այգին թափել էին. ծառերի խիտ շուքերում, օրուան տապը մեղմող զով և մեղմիկ զեփիւռին տակ թռչունների քաղցրագան ճուղումների մէջ թէյ խմելով և կիների անվերջ խօսակցութիւնների թելն ու կոծիկ բանալով ժամանց անելու համար։

Մեր կողմերում ճնշիչ և ամենախիստ կացութեան մը հետևանքով. զրօսանքներից և աշխարհքի հազարաւոր վայելքներից զուրկ և անդաղափար ու մշտապէս փակուած, գոցուած մնալու դատապարտուած Վանեցի կին, իր ամբողջ կեանքն պարտաւորուած է սեղմել տան չորս պատերի և տանկից պարտիզին մէջ։ Հոն է որ մեր փոփուկ սեռը աշխատում է և ճգնում գոնէ աշխարհի միլիոնաւոր բարիքն ու վայելքներից քանիմ բաներ փրցունել, անիծելով գիտակցաբար այն անիծած բաղդն ու դրութիւն որ իրան այնքան ստրկած և ստորնացրած է։ Այս մեր իգական սեռն էլ տաճկական մահացնող դըրութեան կամաւոր զոհն է։ Իրանց տան, իրանց երիկների երջանկութիւն չի վթարելու, իրանց սիրելիների կեանքն իրանց պատճառով չի դառնացնելու համար, նրանք սիրով տանում եւ համակերպում են անասնային միակ և խեղդիչ կեանքին...։

—Աղջի՛ Մարո, էտ թէյ եփեց, ասաց մեծ տատա, դեհ մի շնորհդ ցոյց տուր։

Մարօն կրկնել չի տուեց. երախան գրկից վար դնելով մի ակնթարթում թէյեր պատրաստելով բաժնեց։

Խօսակցութիւն գնալով տաքանում էր։ Մեր աշխարհքի կեանքից այս ու այն նորութիւններ և բնականաբար անվերջ դժբաղդութիւնների լուրերն էլ առաջին տեղն էին բռնում։

Մեր հիւրերից մի քանիսը նոյնպէս անծանօթ էին Մարօի անցեալ կեանքին. այսպէս այնպէս երբ խօսք այդ տեղերին եկաւ, նրանց որպէս կիների՝ հետաքրքրութիւն չարժած. խնդրեցին Մարօից որ իրա պատմութիւնն անէ։ Մարօն արդէն ոգեւորուած, չի մերժեց և կարծես թէ նա ինքն էլ այդ բանին կսպասէր իր սիրտը բանալու և նրանում հաւաքուած դառնութիւնն էլ խօսակցութեան հետ դուրս թափելու։

Զէ՞ սր ցաւին պատմութիւնն էլ՝ ըստ փոփուումի տեսակներից մին է։

«1895 ի Աշունն էր, սկսեց Մարօն իր պատմութիւնն՝ ամենի և ամէն տեղերի պէս չմնական հասարակութիւնն էլ շատ էր ոգեւորուել Սասունի դէպքին հետևանքով լինելիք Հայաստանի բարեկարգումի խնդրոյն առթիւ։ Մեր հարևան քրդերն ու աղաներն անդամ մըտահոգութիւն պատել էր։

«Ես նշանած էի այս ատեն, և իմ նշանածս էր Բարխուդարեանց Մուրատը քսան տարեկան, թոռուն կտրիճ։ Մեր նշանուք կատարվել էր հէնց այդ տարուայ Գարունին, մեր սարերում գիներփակի և կակաղի ծաղկած ատեն իմ հօրեղբայրական օճախը—Մելիքից տուն, աննըշան տուն մը չէր, ժամանակին նա շատ անուանի պետեր տուել էր որ իրանց հովանիին տակ պատսպարում էին. չէ թէ մինակ մեր գիւղ—Բիրպատայանի հայերին, այլ և Նարդուզի ուրիշ շինականներին էլ. մինչև այն անիծած օրեր երբ էն Կիրակցի շները, իբ ա զ ա բռնի մեր գիւղերում հաստատուեցան. ջնջեցին օրըստօրէ մեր հայրենական հնաւանդ նահապետական գլխաւորութիւն. խլեցին մեր ձեռքերից մեր ամէն եղած, չեղած մնացածն էլ Նարդուզի միւս քրդեր եւ Հէրթօշցի աշիրէթներ վերջացուցին, մինչև որ այլ ևս ճիւղակտոր ցիրուցան և ուժասպառ ակամայ ռայաներ և սաբ—

ղուկներ դարձանք եւ անվարձք ծառաներ մեր ամէն գիւղերում հաստատուած այդ քանի մը տուն քուրդ աղաներին։ Այսօր մեր տան չէ մնացել այդ գեղեցիկ՝ և երանելի անցեալից ոչ ինչ եթէ ոչ անուն մը։— Մելիքենց Օճախ— էին կանչում, անուն մը որ կարծես դառն երգիծանք մը լինէր մեր անցեալ վիճակին։

«Բարխուդարենց տունն էլ թէև մեր բարձր ծագումը չունէր, և սակայն նա ել գիւղի համբայ տներից մէկն էր եւ բաւական ունեւոր։

«Ասում էին որ ես խորոտ էի, եւ ատոր համար էլ շատեր կուզէին ինձ իրանց հարս տանել։ Հայրս ասես նա էլ շատ դէմ չէր իմ չուտով ամուսնանալուս, ուզում էր այդ կերպով նորանոր և հաւանական փորձանքներից ազատուիլ, ինչ որ կարող էր իմ կոյսութիւնս դըրանց պատճառել, մեր տեղի պէս անիշխան մի գիւղում։ Սակայն ինձ ուզողներ, ամէնք իրանց փափաքին չի հասան, մայրս կրցած էր կռահել մեր սէր Մուրատի հետ. և Մուրատն էլ անկալատ և անունով երիտասարդ մը էր. տնեցիքն ասես մեր տան հետ դրկից և շատ սիրով. էլ ի՞նչ պատճառ մը կար որ մեր սէրն խանգարէին-

«Խնդիրը քիչ թէ շատ քաչկռտուքներից վերջ մնացել էր Կալանի կարգադրութեան վրայ, հայրս իմ գինս շատ թանդ էր որոշում և դրա հակառակ խըռնամի կողմն էլ շատ վարից էր բռնում. վերջապէս Տէրտէրի և դրկիցների միջամտութիւնով հաղիւ կարելի եղաւ կարգադրութեան մը հանգիլ։ Խնամին պատրաստ էր ինձ համար վճարել 5 ոսկի 5 խըլաթ և 3 խոյ. և նշանն էլ արծաթեայ մատանի մը

«Ամբողջ նշանտուքի միջոցին սրտատրոփ և յուզեալ անցնելից վերջ որքան ուրախ էինք՝ ալ ամէն խոչնդոտ կը վերնար. թէ ալ քիչ ժամանակներից վերջ պիտի հանէինք մեր սրտի մուրադին։

Մ. Ս.

Շարունակելի

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ՈՒՐՄԻ 1900 Յուլիս 2 ին

Երբեմն էլ նախանձի ընդհարումներ ունենում են այս երկու ընկերութիւնները. երբ իրաբ մաղերը փետելու ատիճանին գօրացած են լինում։ Բայց գովելին այն է, որ ցարդ իրենց նախանձը միշտ ի բարին են գործադրել. սակայն կասկածում եմ յետ այսու. որովհետև ներկայ թեմական առաջնորդը զուրկ է այն բարեմասնութիւններից. մասնաւորապէս իւր նախորդի զօրեղ կամքից, ինչպէս պատմում են, թեմական սրբազան խեչպէս ընկերութիւնների, նոյնպէս և շատ գործերի մէջ գրատախտակի պաշտօն է կատարում, ով չուտ հասնի առաւօտ միւսի գրածը կարող է ջընջել սրբազանի մտքից։ Այս կասկածը միայն ունիմ. որովհետև թեմականները մեծ դեր կարող են կատարել այսպիսի հանգամանքներում։ Թէ և ընկերութեան նախագահներ եւ վարչական ժողովի անդամները բոլորն էլ խելացի ու խոհեմ կանայք են, բայց մի փոքրիկ սխալ, և ահա ամէն բան տակն ու վըրայ է անում։

Ի Սրտէ ցանկութիւն եմ յայտնում ընկերութիւնների այս մասին ունեցած սխալների ուղղութեան։ Ես կը յուսամ որ իրենց գեղեցիկ գործի զեկը չեն յանձնում անուղեղ գլուխների. կամ իրենց եսասիրութեան ու նախանձին չեն զոհեր Ատրպատականի գեղեցիկ ու փայլուն ապագան։ Աւելի ուրախ կը լինէինք, եթէ Կ. Պոլսոյ «Միացեալ Ընկերութեան» օրինակին հետեւէին Թաւրիզի Հայուհիք ու միացեալ ուժերով գործէին, յայտժամ կարելի էր հաւատալ թէ ազնիւ Տիկինները իրենց եսը կը զոհէին ի սէր իրենց հոգու չափ սիրած ազգի զաւակներին։ Թէ այսպէս թէ այնպէս, այսօր բարոյական շատ բարձր աստիճանի վրայ են կանգնել նոքա, ու պիտի գայ մի օր որ ուղեղաւոր մի ղեկավարի առաջնորդութեամբ մի կողմ շպրթեն եսական հոգին և աւելի գմայելի գործեր տեսնեն քան տեսել են ցարդ։

Ինչպէս երևում է «Զայն-Հայրենեացի» յօդուածն բաւական ազդել է թեմական սրբազանին, որ բարեհաճել է յանձն առնել քահանայ ձեռնադրելու մի ուսուցչի և որպէս՝ քահանայ ուսուցիչ՝ ուղարկել Բարանդուզ՝ Թաւրիզի Հայուհեաց ընկերութեան ծախքով։

Ն. ԵՐ.

ՍԵԼԻՄ

Հոկ. 7 1900

Տեղւոյս որբանոցի վարչ. վեց ամսեայ շրջանը լրացած ըլլալով վարչութիւնը հրապարակային ժողով մը սարքեց։ Ուր յատուկ վարչութեան կողմէ հրաւիրուած էր, Պ. Սուրէն Սուրէնեան Ատենախօսելու։

Տեղեկագիրը կարդացուելէ ետք վարչութիւնը շնորհակալութեան քուէ ըստացաւ և նոր վարչութիւն մը ընտրուեցաւ, և գոյացուած դրամը հին վարչ. պիտի ղրկէ Պատրիարքարան։

Պող. Մարսուպեան

Լօէլի Ազգ. Հոգաբարձութեան հրաւիրանօք այս անցեալ կիրակի երեկոյ հրապարակային ժողով մը տեղի ունեցաւ Ուստր գումարելի Ազգ. Համաժողովին Լօէլէն պատգամաւորներ ղրկելու մասին հարկ եղած որոշումը տալու և տնօրինութիւնները ընելու։

Ժողովը բացուեցաւ հոգևոր հովիւ Արժ. Տ. Արսէն վարդապետ Վեհունիի նախագահութեամբ և Տիար Ա. Պապիկեանի Ատենապետութեամբ։

Ատենախօսեցին Տիարք Ս. Յովսէփեան և Գ. Զիթճեան։

Ժողովը միաձայնութեամբ որոշեց որ իր Լօէլի Հայ ժողովրդեան կողմանէ պատգամաւորներ ղրկելու պէտքը, որոշեց անոնք երկու ըլլան. և անոնց ընելիք ծախքերն ալ հանգանակուեցաւ։

Պատգամաւորներ են Տօք. Գաղանճեան և Գ. Պապիկեան։

Թ. Մալխասեան

Լօէլ

ԼՕՐԷՆՍ 7 Հոկտ. 1900

«ԶԱՑՆ-ՀԱՅՐԵՆԵԱՑ»ի

Խմբագրութեան

Քաղաքիս Պատուարժան Հոգաբարձութիւնը հրապարակային ժողով ունեցաւ Սեպտ. 30ի երեկոյին ընդ նախագահութեամբ Թեմիս Առաջնորդ Գեր. Ա. Վ. Վեհունիի. Հոգաբարձութիւնը կարդաց իր ըզունած Ամերիկայի Հնչ. Նահանգային Վարչութեան վերջերս հրատարակած Շրջաբերականը, և ժողովրդի ուշադրութեան ենթարկեց։

Բաւական վիճաբանութենէ վերջ ժողովուրդը մեծամասնութեամբ հրապարակուած Համաժողովը ընդունեց սկզբունքով. ապա այդ Համաժողովին իբր պատուիրակ քաղաքիս գաղութէն ընտրուեցան Տօքթ. Հ. Ս. Ճէլալեան. Երեմիա Կիւլէկեան և Պետրոս Եղոյեան։

Ժողովը աւելի գործնական քայլ մը առնելով հաւաքում մը ըրաւ Պատուիրակներու ծախուց համար և $11·50 հաւաքելով, մնացեալ մէկ քանի տօլարն ալ հանգանակելը երեք անդամէ բաղկացեալ մասնախումբի մը յանձնուեցաւ մեր ժողովրդի այս գործնական քայլը Համաժողովին հարկաւորութիւնը կը հաստատէ. ուստի իրաւունք ունինք այժմէն յուսալ մխիթարիչ արդիւնք սոյն գեղեցիկ յղացումէն։

Ալֆա

Ա. Զ Դ

Ուշադրութիւն մեր տեղափոխութեան և նոր հասցէին։

Ցոդուած, թղթակցութիւն և դրամ ղրկել հետևեալ հասցէով միայն։

AMERICAN HAI PUB. CO.

8 BENNET ST., BOSTON, MASS.

ԲՈՂՈՔԻ ՄԱՍԻՆ

Զայն-Հայրենեացի նախորդ թիւոյն մէջ Փրովիտենսէն Գրիգոր Ատանեան ըստորագրութեամբ Վանի սովելոց ղրկուելիք գումարի մասին տրուած բողոքին կը պատասխանէ Փրովիտենսի Վանի սովելոց յանձնախումբը, և բացարձակօրէն կը հերքէ այդպիսի խնդրոյ մը իրենց հետ գոյութիւն ունենալը, ու կը յաւելու թէ այդպիսի ղրոյցներ տարածուած են Սէնթրֆիլդի Վանի սովելոց յանձնախմբի հաւաքած մէկ գումարի մասին։

Արդ քանի որ վերոյիշեալ «Բողոքող»ը տեղի խնդիրը մութ թողուցած է, ղինք կը հրաւիրենք որ այդ կետը ճըշտէ. առանց գիտնալու թէ խօսքը ո՞ր յանձնախումբին ուղղած է, ինչ որ հրատարակենք ժամավաճառութիւն ըրած կըլլանք։

ԽՄԲ.

ՓՈՔՐ ՕՐԻՈՐԴ ԿԱՊՈՅՏ ԱՉԵՐ

Փոքր օրիորդ կապոյտ աչեր բացաւ դուռն
Ըսաւ «Ներսը մարդ չկայ»։
Փոքր օրիորդ կապոյտ աչեր սիրով մ' բուռն
Սիրտս դողցաւ մշտակայ։

Փոքր օրիորդ կապոյտ աչեր դուռն կանգնած,
«Ներս կուզե՞ս գալ»։ կը հարցնէ,
«Հայրիկս տուն չէ. ժամէ մ' չգար անկասկած,
Ներս կրնաս գալ ուզես նէ»։

Կապոյտ աչեր օրիորդն բացաւ սրտին դուռ.
«Մարդ չկայ ներսն» ըսաւ ան։
Ա՜հ այդ մուտքէն ի՜նչպէս երթամ ներսը՝ ուր
Սուրբ հուր կայ և սուրբ սեղան։

Կապոյտ աչեր փոքր օրիորդ Արեւոյդ...!
Մի՛ զիս դուռը մի՛ պահեր,
Կը փչէ հովն խիստ ցրտաշունչ, չունի՞ս դութ.
Ոհ ներս առ զիս, սէր իմ սէր։

Փոքր օրիորդ կապոյտ աչեր կանգնած դուռն,
Ժպիտ կարձկէ սիրագեղ.
«Հայրիկս տուն չէ, ըսաւ, ժամէմ՝ չգար տուն
Եկ սպասենք միատեղ»։

Թարգմանեց Տէյլի Նիւզէն
Հասարակ Մահկանացու

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՑԵԼԻ ՈՒ ՆԵՐԿԱՑԻ ՏԽՈՒՐ ՑԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Զմիւռնիա 1900 Յունիս 18ին.

(Շարունակութիւն նախորդ թուէդ)

Երասխի եկերքը հասնելուն դեռ 5-6 ժամ մնացած՝ մի բարձրավանդակի վրայէն տեսանք Հայաստանի վեհապանծ Մասիս լեռը. ուր ամէն ոք սկսեց ուրախութեամբ «Մասիս՛ը, Մասիս՛ը». որոնք յիշեցնում էին ինձ Գոլոմպոսի Ամերիկայի ցամաքը տեսնելու ուրախութիւնը։ Թէպէտ և ամէն քայլափոխին հանդիպում էինք պարսիկ «Թոփրաք պաստիի» պաշտօնեաներին, բայց ո՞վ էր կարեւորութիւն տալիս փողի, պարսկական սև փողեր տալով անցնում էինք որովհետև այլ ևս հիւպատոս չունէինք մեզ հետ, նա Խոյից բաժանուեցաւ դէպի Թաւրիզը։ Խոյից երեք աւուր վրայ հասանք հին Զուղա, ուր վերջին կողոպուաըն ու վերջին կոպեկներն տալով անցագրի եւ մաքսատան պաշտօնեաներին՝ ուրախութեամբ անցանք Ռուսական հողի վրայ. կարաւանի ուրախութեան չափը անցել էր. թէև կիսամերկ և անփող վիճակում, բայց էլի հողն ու ջուր, տիրող կանոնն ու օրէնքն ուրախութիւն էր ներշնչում ամենիս. առանց զգալու թէ գաւաթի չրթունքը մեղրոտած թունաւի բաժակը պիտի քամենք մի քանի ամսից վերջ։ «Ծոմն ինկող օձին է փաթաթվում»։

Զանց եմ առնում Զուղայից մինչեւ Էջմիածին հասնելու պատահարները նըկարագրելուց. որովհետև ամէն ոք մոռացած անցեալը՝ փափաքում է ժամ առաջ տեսնել Ս. Էջմիածնի եւ իւրաքանչիւր Հայրիկին։ Հինգ աւուր վրայ Զուղայից հասանք Էջմիածին մի ազնիւ Հայի կառքով։ Օ՜հ, անհուն գայրոյթս չորս տարուց վերջն էլ բորբոքում է ինձ դէպի տեղւոյն վեղարաւոր ու մի կարգ անվեղար եկեղեցականները, որոնք իրենց նախորդների չիջուկն անգամ չունին իրենց մէջներ, իսպառ զուրկ բարոյական և ազնիւ զգացումներից, նոքա նայում էին գաղթական ժողովուրդի դրայաւելի ստոր քան թշնամի քրդերի հակաքրիստոնէական հայացքները... եթէ չը լինէր մի առաքինազուարթ Հայրիկ. ինչպիտի լինէր այնքան բազմաթիւ աբժբախդների դրութիւնը, բայց մի սիրտ մի ձեռք ի՞նչ կարող էր անել այնքան բազմութեան հետ երբ վանքի միւս միաբաններ՝ առանց բացառութեան՝ զուրկ էին խղճի բարեմասնութիւններից։ Իսկ տգեղ պատահարներին չեմ ուզում երեան հանել... Թողունք որ ժամանակը բարեփոխէ մեր արդի եկեղեցական թափ թըփուկ ինքնընտիրներին որպիսիներն նմանները քիչ բացառութեամբ գտնվում են Տաճկաստանում։

Վերջապէս մեր ցանկութեան համաձայն ամէնքս ալ արժանի եղանք վերադարձ Հայրիկի Այն համբուրելու, օրհնութիւնը և մխիթարական սրտագրաւ խրատներն ընդունելու։ Տակաւին տասն օր էինք հասել Էջմիածին. ահա Իգդիրից հեռագիր հասաւ, որ մօտ 800 հոգի Վանեցի գաղթականներ հասել են անդ և դեռ եւեւից շարունակ գալիս են։ Բոլորովին տարութիւնը պատեց վըշտացեալ և ծերունի Հայրապետին. այլ առանց վհատելու ամէն պատրաստութիւն ները տեսնել տուաւ զանոնք ընդունելու և հայրաբար մխիթարելու. անմի ջապէս հեռագրեց տեղւոյն գործակալին, որ հարկ եղած նիւթական միջոցները չի խնայէ գաղթականներին հանգստութեամբ Էջմիածին ուղարկելու գործում։

Ահագին բազմութեամբ լեցուեցաւ Էջմիածին. ներկայ եղողները միայն գիտեն թէ Մերուանի Հայրապետը օրական քանի՞ անգամ այցելում էր ամենուն, մանաւանդ հիւանդներին։ Իմ կարծիքով՝ վեհափառ իր քով ունեցած ամբողջ կոպիկները ծախսելուց վերջ՝ պարտքի տակ էլ ինկաւ իւր բարի բնաւորութեան համաձայն։ Մինչդեռ միւս հարստութեան տիրող պորտաբոյծ Եպիսկոպոսներ ու վարդապետները ոչ միայն կոպեկ դուրս չը հանին, այլ և քաղցը խօսքերով մխիթարելն անգամ զլացին և ընդհակառակն կծու հայհոյութիւններ էին թափում թշուառների գլխին. (իհար կէ)բացառութիւնը յարգելու է գէթ այս մասում)։ Մեզանից մինն ինչպէս երեւում էր, շատ մօտից ծանօթ էր Հայրիկին կամ Վանից առանձին պաշտօնով էր եկել, որի ծանր վարմունքը, նիստն ու կացը քիչ օրից վերջ պատկառանք ազդեց նոյն իսկ Եպիսկոպոսների վրայ։ Հազարից աւելի գաղթականների մէջ միայն այս անձը յարգվում էր ամենից։ բայց քիչ օրից յետոյ յանկարծ հեռացաւ Էջմիածնից յիշեալ ճարպիկ ու զուարթ անձնաւորութիւնը. ո՞ւր, ի՞նչ պաշտօնով մեզ անյայտ է։

Չեմ կարող մոռանալ նաև Էջմիածնի հիւրանոցում պատահած մի միջադէպը, որ տեղի ունեցաւ ընդ մէջ Խորէն Եպիսկոպոս Ստեփանէի և Վանեցի Նորեկ Քահանայից։ Ստեփանէ Եպիսկոպոսն էլ նոյն օրը նոր էր հասել Էջմիածին Խրիմի Ս. Խաչից և սովորութեան համաձայն Զազարապատի սենեակներից մինում բընակվում էր։ Սրբազանը տեսնելով Վանեցի մի քանի Քահանաների (որոնք առաւօտեան ժամասացութիւնից դառնալով հիւրանոցն էին մտնում բաւական վայելուչ հագնուած) հայրենասիրական արդար զայրութով վրաներ յարձակուեցաւ որոնք իրենց հօտը թողած հայրենիքում անհովիւ ու իրենք փող դահելու կամ անձերը փրկելու նպատակով Ռուսաստան էին գաղթել, Սրբազանը բարկութենէն չէր իմանում ինչ անելը. ներս էր վազում վերարկուն ու ու գտակը ցոյց էր տալիս. ասելով թէ «Իմոնքս աւելի հին չե՞ն քան ձերինները, ինչո՞ւ էք եկել այս տեղերը խաչագողնե՛ր, պէտք էր

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Այս վերնագրին ներքեւ տրուած քանի մը ծանօթութիւնները կարժէ ամէն մարդու գիտնալ. չեմ կարծեր գտնուի անձ մը որ գանոնք գիտնալուն համար ցաւի։

Ինչպէ՞ս ճանչնալու է կովը։— Լաւ կը կոչենք այն կովերը որոնք շատ կաթ կուտան. բայց որո՞նք և ինչպէս են շատ կաթ տուողները, չենք գիտեր։

Կովը կարտադրէ կաթը իր առած սնունդէն. այն կովը որ շատ կեր կուտէ բնական է որ շատ ալ կաթ տայ։ Բայց շատ անգամ կը գտնուին կովեր որ թէև կուտեն մեծ քանակութեամբ՝ բայց կարտադրեն քիչ կաթ, ասով առաջին յայտնութիւնը անարժէք կըլլայ, և խնդիրը նորէն անմեկնելի կը մնայ։

Այն կովը որ կուտէ շատ կեր և չարտադրեր շատ կաթ, ըսէլ է թէ իր կերը ուրիշ նպատակի մը կը ծառայեցնէ, այն է՝ իր միսը կաւելցնէ. կը գիրնայ. իսկ այն կովը որ կուտէ շատ կեր և կուտայ շատ կաթ՝ ըսէլ է թէ իր կերը մեծ մասամբ կաթի արտադրութեան համար կը գործածէ։

Բայց չուկայէն կով գնած ատեններս չենք գիտնար թէ կովը որքան կեր կուտէ. ուրեմն մասնաւոր օրէնք ու կանոներ ըլլարու են կովի մը աղէկ կամ վատ ըլլալը որոշող։

Նշանները հետեւեալներն են։

Կովին ամբողջ մարմինը երկու մասի կը բաժնենք, այն գործարաններն ու մասերը որոնք կաթի արտադրութեան հետ գործ ունին կը կոչենք կարեւոր գործարաններ, իսկ անոնք որ չունին՝ Անկարեւոր գործարաններ։

Եղիա Թ. Գզիրեան

(Ունանող)

(Շարունակելի)

ՉԱՑՆ ՀԱՅՐԵՆԵԱՑԻ Լօրէնսի գործակալն է Տիար Մ. Վարդանեան։ և Լօէլինը Տիար Բարսեղ Փափազեան։

M. HARPOOTLIAN,
P. O. Box 470, Worcester, Mass
ՍԵՂԱՆԱՒՈՐ ՓՈԽ. ԳՐՈՑ
Տաճկաստանի բոլոր քաղաքներն ղբրամ կը փոխադրենք։ Մեր տան կեդրոնատեղիք են Կ. Պոլիս ու Խարբերդ մեծ. Ցարութիւն էֆ. Խարբութլեան և եղբարք մեծ գումարով փոխ գիր առնողներուն մասնաւոր զեղչ կընենք։ Ամէն գծի վրայ նաւային տոմսակ կուտանք. տոմսակ ու դրամ հեռագրով կը ղրկենք Մարսէյլ։
Մեր խանութին հասցէն է
57 Hanover Street.
Միհրան Խարբութլեան
Ուստր

դուք ժողովուրդի գլուխն անցած՝ քարով, մոխրով, եռացած ջրով կռիւ անէք. է՛հ. միայն Իզմիրեանն ունիք, ուրիշ ոչ ոք»։

Մի քիչից յետոյ՝ երբ Սրբազանի բարկութիւնը անցաւ, Վանեցի Քահանաներից մին աւելի երիտասարդական եւ ինչպէս երևում էր բնական համարձակախօսն ամենայն խստութեամբ պատասխանեց սրբազանին հետևեալ խօսքերով, «Սրբազան, դուք հասկացե՞լ էք մեր ովքեր լինելը, կամ ի՛նչ պաշտօնով մինչև այստեղեր հասնելը, դուք ձեր վերարկուն ու գդակն էք ցոյց տալիս մեզ, իհարկէ մենք ձեզանից աւելի լաւն ենք հագնում ու աւելի նորն, վասն զի մենք մեր նախնիքներից սովորել ենք ձեզ նման չա՞տ սրբազաններու հագուստներնուիրել» յետոյ ձեռքը պարզեց դէպի գաղթականները, այդ տեսնո՞ւմ էք, երեք տարիներից ի վեր, սկսեալ Սասնոյ կոտորածից՝ սոցանից աւելի բազմաթիւ գաղթականների ենք պահել Վանում, բայց այժմ գաղթելու կարգը մեզ հասաւ, հետևաբար ձեզ նման սրբազանները պէտք է պահեն սոցա այսուհետև։ Դուք ասում էք, քարով, փայտով, մոխրով, եռացած ջրով կռուէիք Թուրքի հետ, Թուրքի ձեռք ոտք ո՞վ էր կապել. որ մենք հաւի նման խաչէինք զիրեն. կամ թէ մեզ ո՞վ թնթանոթներ տուել էր, որ լեռների գլխից տեղացած ռումբերին ռումբներով պատասխանէինք։ Մենք այս վիճակով իսկ պատրաստ ենք մեր հայրենիքը վերադառնալու, դէպի պատուաւոր մահը, սակայն Հայաստանում ոչ Եպիսկոպոս, ոչ մի կարող եկեղեցական չը մնաց. հաճեցէք ձեզ հետ մի քանի Եպիսկոպոս ու Վարդապետներ վեր առնել միասին վերադառնանք, ի՞նչ խոշոր խոշոր ջարդում էք», ասաց՝ ու հեռացաւ Քահանան զայրագին։ Ես նկատեցի, Քահանայի դէմքը այնպէս կարմրել էր և այնքան շեշտումներով էր խօսում, ինչպէս ասում են, աչքերից ու բերնից կրակ ու բոց էր թափում։ Նորէն Սրբազանը, (ինչպէս բնական է ամէն բարկացողների եւ թունդ անձնաւորների, երբ դիմացինն աւելի խիստ, նոքա շուտով են մեղմանում) բոլորովին փոխուած ու լուրջ բնաւորութիւն ստացած՝ մինչև վերջը մտիկ էր անում քահանային։ Հայրենասէր ու պարզամիտ սրբազանը շարունակ Մուշի ու Պուլանըխի և դանազան գիւղացի մուրացիկ քահանաների պատահել էր. նորա կարծիքով Վանայ կամ Տաճկաստանի բոլոր քահանաներն մուրացիկ կը լինէին։ Ասում են թէ վեհ. Հայրիկին պատմել էին նոյն աւուր Վանեցի քահանայի համարձակախօսութիւնը. քէֆը շատ էր եկել թէև բայց զգուշացրել էր վշտացած քահանային որ կարևորութիւն չը տար ամէն խօսողներին։

Թղթակից

Շարունակելի

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ոթրթաունի մէջ ազգային հոգաբարձութիւն մը ընտրուած է հետևեալ անձերէն. Պարոնայք Յակոբ Բզվանեան, Կարապետ Թաշճեան, Թորոս Թոստուրեան, Դաւիթ Պոյեաճեան, և Յակոբ Տէրտէրեան։ Երեսփոխան ընտրուած են Պարոնայք Առաքել Մկրտիչեան եւ Եղիա Թումաճանեան։

Պրայթնի մէջ ազգային ժողով մը պիտի ըլլայ յառաջիկայ կիրակի կէս օրին Մարքէթ սթրիտի ժողովասրահին մէջ ուր պիտի ատենախօսեն Տիարք Փառնակ Ադամեանև Գ. Զիթճեան.

Խարբերդի Կուսակալի օգնական Ստեփ. 2200 դահեկան ամսաթոշակով հանգստեան կանչուած է։

Սեւերեկի մէջ Մահտեսի Խումար բարեպաշտուհին վերջերս ամէն ունեցածը կտակած է տեղւոյն Ս. Թորոս եկեղեցիին։ Կտակացանկը հետևեալն է. Զաւարա գիւղի կէս բաժինը. Պատրիգ գիւղի մէկ չորրորդը, անբողջ տան մը կէսը։

Թիֆլիզէն կը գրեն թէ հանգուցեալ Այվազովսքիի ժառանգորդներուն և Թէոդոսիա քաղաքին միջև հետաքրքրական խնդիր մը ծագեր է։

Հանգուցեալին կտակին համաձայն քաղաքին կը պատկանին այն բոլոր նկարները որոնք մահուան օրը կը գտնուէին Այվազովսքիի պատկերասրահին մէջ։ Արդ հանգուցեալին չորս ամենալաւ նկարները որոնք Փեթրսպուրկի ցուցահանդէսէն Թէոդոսիա բերուած էին պատկերասրահին մէջ դետեղելու համար մահուան օրը պատկերասրահին մէջ չէին գտնուեր։ Այս պարագան առիթ տուեր է հանգուցեալին ժառանգորդներուն՝ առարկելու թէ ատոնք քաղաքին չեն պատկանիր այլ իրենց։ Այդ նկարները 100000 ռուբլի կը գնահատուին։

Սեմբերսբոյի մէջ Հայ Ազգային Պ. Աթանաս Սպենտերեան, որ մէկ միլիոն ռուբլիի տէր է, 50000 ռուբլի նուիրեր է քաղաքին աղքատ հայերուն բնակարան շինելու նպատակով։

Պատրիարքարանէն վերստին դիմումներ կըլլան դրան Ազգ. Հիւանդանոցի որբանոցին շինուելիք գետնին վերաբերեալ խնդիրներու կարգադրութեան համար։ Ինչպէս յայտնի է, այս որբանոցը պիտի շինուի Գարակէօղեան գումարով որոց ներկայացուցիչը, Գրիգոր էֆ. Գարակէօղեան ամէն պատրաստականութիւն յայտնած է շինութեան սկսելու համար, պայմանաւ որ Ազգային սեփականութիւն եղող գետին մը ցոյց տըրուի, որովհետև շինութեան համար սահմանեալ 5000 ոսկիի գումարը, թէ գետին մը գնելու և թէ շէնք շինելու չի բաւեր։

Կարինէն Սուրհանդակ թերթի թղթակիցը հետևեալը կը գրէ։

Վանի այցելու հովիւ Ներսէս Եպիսկոպոս Արսլանեան 8 քահանայ ձեռնադրեր է որոց 3ը քաղաքէն ու 5ը շրջականներէն և Գղիէն Եղեր են, որոնք ոչ թէ իրենց հմտութեան կամ բարի վարուց համար այս կոչման արժանացան, այլ գլխաւորաբար պակաս թիւ մը լեցնելու։ Քաղաքէս մէկ քանիներ բարոյական լաւ անցեալ չունեցող վարժապետ մը առաջ քշելուն համար «Ապահի» դասակարգն ալ իր կողմէն «Գաթաճի» մը ներկայացուց, երբէս զի խեղճը կարող ըլլայ իր ընտանիքը պահել. բայց տեղապահը մերժեց ըսելով, «Հիմա ալ կարգը եկաւ գաթաճի հէլվաճիներուն որ քահանայ ձեռնադրել տանք», այս տողերը կարդացողը անշուշտ պիտի զգածուի հարկաւ, նկատելով որ եկեղեցականութիւնը անկելանոց կը դառնայ հոտղհետէ. հակառակ այն փորձերուն որոնք կըլլան կարելի եղածին չափ բարձրացնելու զայն։

Վանի այցելու հովիւ Ներսէս Եպիսկոպոս Արսլանեան Վանէն մեկներ եւ Պոլիս հասեր է։

ԲՈՂՔԱԿԱՆ

Պերլինէն կը հեռագրուի թէ հոն Հընդէաներուն մէջ կազմակերպեալ շարժում մը սկսուած է, և որոշուած է ամէն տարի ազգային համաժողով գումարել աշխարհի մէջ հակահրէութեան դարման մը տանելու։

Մ. ՆԱՀԱՆԳԻ ԵՒ ԹՈՒՐՔԻԱ

Մ. Նահանգաց կառավարութիւնը կրկին Թիւրք կառավարութենէն սկսած է պահանջել դրամական հատուցմանց 90,000 տոլարի գումարը, ու սոսկ խօսքէն անդին քայլեր առնել սկսած է, պահանջած է Թիւրք կառավարութենէն որ իր Ոչինկթոնի դեսպանը ետ կանչէ, ըսելով թէ, «Բանի որ դրամական հատուցմանց խոստումը չգործադրուիր, ալևս ուրիշ լուծուելիք դիւանագիտական խնդիրներ գոյութիւն չունին երկու կառավարութեանց մէջ, հետևաբաք դիւանագիտական ներկայացուցիչներու պէտք չկայ»։

Թիւրք կառավարութիւնը ետ կը կանչէ իր Ոչինկթոնի ներկայ դեսպանը Այի Ֆէրուզ պէյ, իսկ անոր տեղը ուրիշ մը կը նշանակէ և Մ. Նահանգաց Կ. Պոլսոյ ներկայ գործակալին առջև նորագոյն խոստումը կրկին կը դնէ։

Կըսուի շատ ծածուկ աղբիւրներու ներշնչութիւնով, թէ Թիւրք կառավարութիւնը սկսած է մասնավճարի դրութիւնով վճարել հատուցումը և թէ արդէն քանի մը հազար տոլար վճարած է։

Նիւ-Եօրք Հէրալտի Ոչինկթոնի թղթակիցը կըսէ թէ պաշտօնական աղբիւրէ իմացած է որ Ոչինկթոնի կառավարութիւնը հասած է այն եզրակացութեան թէ, Սուլթանին հետ գործ ունենալու ատեն հարկէ ծայրագոյն միջոցներու դիմել. ու արդէն պատրաստութիւններու ձեռնարկած է, որ եթէ դիւանագիտական այս վերջնագոյն բանակցութիւններն ալ ապարդիւն ելլեն, խիստ միջոց ձեռք առնու, և այդ միջոցը պիտի ըլլայ Պոլսոյ Ամերիկեան դեսպանը Մր. Սթրաուս որ այժմ հոս է. ետ ղրկել Թիւրք կառավարութեան ուղղեալ վերջնագրով մը. որը Սուլթանը ուշքի բերելով անոր պիտի հասկացունէ թէ Մ. Նահանգաց կառավարութիւնը որոշած է Սուլթանին կրկնակի խոստումները իրեն գործադրել տալ։

Հատուցմանց այս ծանօթ խնդրոյ ծագում առնելէն ի վեր Մ. Նահանգաց կառավարութիւնը բոլորովին ապարդիւն խաղերով պարապած չէ Թիւրք կառարութեան հետ։

Թիւրք կառավարութիւնը կարնոյ Ամերիկեան հիւպատոսը ճանչնալ չէր ուզեր։ Հիմա կը ճանչնայ։

Ամերիկեան միսիոնարներ երբ երկրէն դուրս ելլելու ըլլային անոնց անցագիր չէր տար. որպէսզի վերադառնալու իրաւունք չունենային։ Հիմա անցագիր կուտայ։

Միսիոնարական շէնքեր որ այրուեցան անոնց վերաշինութիւնը չէր թուլատրեր։ Հիմա հրովարտակաւ արտօնած է։

Կոտորածին ժամանակ Ամերիկեան քաղաքացիներու վնասը հատուցանելու պարտական չեմ կըսէր Սուլթանը։ Հիմա պարտքս՝ է կըսէ։

Մանաւանդ որ Նախագահական ընտրութեանց քուէարկութեան օրը կը մօտենայ. շատ հաւանական է որ քուէարկողներուն վրայ նպաստաւոր ազդեցութիւն գործելու դիտումով մանաւանդ. Նախագահը ուզէ Սուլթանին վրայ մեծ ճնշում ի գործ դնելով գանձել պահանջը։

Կ. Պոլիս Սեպտ. 27.

Շահին գալստեան համար եղած պատրաստութիւններէն դատ. չարթուս պատմութիւնը կը բաղկանայ ձերբակալութիւններէ և սպանելիքներէ։

Ձերբակալեալներէն ոմանք իւլեմաներ ու զինուորական պաշտօնեայներ են. իսկ մեծամասնութիւնը հայեր, որոցմով լեցուած են բանտերը։

ՊԱԼՔԱՆ

Պալքանի մէջ նորէն յեղափոխական ոգեւորութիւն կը տիրէ։ Մակեդոնիոյ յեղափոխական կոմիտէին հրատարակած մէկ յայտարարութենէն կը տեսնուի թէ Մակեդոնիոյ և Հայ յեղափոխականներու մէջ գործունէութեան համաձայնութիւն մը կայացեր է։

Ալպանեացիք ալ յեղափոխական ոգեւորութիւն կը յայտնեն. և Մակեդոնիոյ հետ գործակցելու միտում կը ցուցնեն։ Ալպանիոյ յեղափոխական շարժումները կաշկանդուած են տեղւոյն մէջ տիրող կրօնական երեք խմբութեանց պատճառաւ. որք են Մահմէտականութիւն, Պապականութիւն և Յունադաւանութիւն։

Այժմ Ալպանիոյ յեղափոխական կոմիտէներն Եւրոպիոյ զանազան քաղաքաց մէջ սկսած են ջանքեր ի գործ դընել որ Ալպանիոյ մէջ հասարակաց լեզու մը և կրօնք մը որդեգրուի. ինչ որ Սերպիա կը ջանայ իրագործել Մակեդոնիոյ մէջ։ Ու Գարատաղի մայրաքաղաքին մէջ մասնաւոր գործունէութիւն մը կայ Ալպանիոյ ազատագրման ու Գարատաղի միացման ի նպաստ։

Այժմ Մակեդոնիոյ յեղափոխական կազմակերպութիւնն ալ, անցելոյն հակառակն՝ սկսած է ազդել Պուլկար կառավարութեան վրայ և անոր քաղաքականութիւնը առաջնորդող Մենտորի դիրքը գրաւած է։

Կ. Պոլսէն Լնտրն Սթանտարտին կը հեռագրուի թէ Իւսքիւպի մէջ խռովութիւն ծագեր է. Ալպանեացի Մահմէտականք իրենց խանութները գոցեր, և նահանգապետին խօսք ղրկեր ու պահանջեր են որ ան ճենտիրմէի հրամանատար Մէհմէտ փաշան պաշտօնանկ ըլլայ, ճենտերմեները Մէհմէտի հրամանատարութեան տակ կը պաշարեն շէնքը, կռիւը տեղի կունենայ, երկու կողմէն շատեր կը վիրաւորուին և պարագլուխները կը ձերբակալուին։

Կարմիր ծովին վրայ Թիւրք պահակ շոգենաւի մը նաւաստիներն խռովութիւն յարուցեր են իրենց թոչակներուն անվճար մնալուն պատճառաւ։

Հին հին պատմութիւնն է։

Սուլթանը իրատէով մը հրամայեր է որ բանակին մէջ օդապարիկ և թղթատար աղաւնի չգործածուին։

Սուլթան Համիտ որոշեր է փոխել Օսմանեան գահակալութեան յաջորդութեան հաստատուած դրութիւնը։

Օսմանեան գահակալութեան յաջորդութեան իրաւունքը միշտ կերթայ կայսերական ընտանեաց երիցագոյն անդամին։ Այժմ Սուլթան Համիտ անանկ կարգադրած է որ իր մեռնելէն ետքը գահը բարձրանայ իր երրորդ որդին Պէրհանեստին, որ այժմ 15 տարեկան է։

Գերմանիոյ կայսրը Կ. Պոլիս այցելած ատեն շատ հաւնած էր Սուլթանին

յիշեալ որդիին. ու Սուլթանին թելադրած էր որ իրեն յաջորդ նշանակէ զայն։

Սուլթան Ազիզ ալ նոյն բանը մը-տադրած էր իր որդւոյն Եուսուֆ Իզզետինի համար, սակայն սպաննուելովը չիրականացաւ անոր այդ բաղձանքը, այժմ որ Սուլթան Համիտ երկրին ամէն կարգի իշխանութիւնները իրեն ձեռքին մէջ ունի, և Շէյխիւլ Իսլամը, որմէ կախեալ է ամէն հաստատեալ օրէնքները փոփոխելու ֆէթֆան տալը, այսօր բանին բուն նշանակութիւնովը բանտարկեալ մը է Ելդիզ մէջ և կարող չէ ուրիշ բան մը ընել բացի Սուլթանին կամքը կատարելէ. հետևաբար Սուլթանը իր այդ կամքը իրագործելու արգելք չունի իր առջև։

Մոսգուսէն Օգոստ. 2ին կը հեռագրուի թէ Պագուի մէջ 8 Նաւթի ընկերութեանց ստացուածքները կրակով կործանուած են շատ մը նաւթային հորերով և մեքենաներով միասին։

Սեպտ. 20ին Կ. Պոլիսէն Լօնտոն Թայմզի կը հեռագրուի թէ Արզուեան անուն անձ մը որ Ամերիկեան անցագիր ունի եղեր ձերբակալուած է. ու Ամերիկեան պաշտօնեայն դրան բերանացի դիմումը բրած է, այդ դէպքին վրայ բաղդում հայեր ձերբակալուած են, ասկանական նախարարը այս բանտարկեալներուն հաց տալ կը մերժէ և կըսէ թէ բանտարկեալոց բարեկամները պարտին հոգալ զանոնք. հետևաբար ամենէն աղքատ եղողները մեծ նեղութեան մէջ են. այս առթիւ Հայոց Պատրիարքը դիմում բրած է դրան։

ՃԻՇՏ ԿԷՍ ԳՆՈՎ

ԱՌ ՁԵՌՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Անգլիերէնէ Հայերէն

Գիշերային վարժարաններու բացման առթիւ և ի դիւրութիւն աղքատիկ ուսանելի սիրող ուսանողներու, մեր բառարաններու թղթակազմները, զորս նոր ստացանք կազմատուն էն, պիտի վաճառենք ճիշտ Կէս Գնով, հատը §1,25ի։ Ճանապարհածախսը մեր վրայ է։ Գնելու համար դիմել առ

B. R. TOROSIAN,
West Hobokn, N. J.

ԿՈՒԶՈՒԻ

Վարժ կօշկակար մը կուզուի որ քիչ մ'ալ Անգլիերէն գիտէ. առ այժմ շաբաթական 6 տօլար կուտամ, և մինչեւ $8ի ասպարէզ կայ, շարունակական գործ.

Դիմել առ
Ֆիչպուրկ
26 Academy St.,
Fitchburg, Mass.

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ
ՏՕՆԱՊԵՏ ՃԵԼԱԼԵԱՆ
38 Նիլանտ փողոց
Պոսթոն

Մենք ալ ուժան ճաշ կուտանք, սակայն յամախորդներ գոհացունելու համար աւելին պէտք է. մաքուր ճաշարան, մաքուր ապրանք, վարպետ խոհարար, համեղ կերակուր։ Մեր ըսածը հաստատելու համար մէկ այցելութիւն մը բաւական է։

ՐԱՖՖԻ

«ԴԱՒԻԹ-ԲԷԿ» Ա. Բ. Գ հատոր վերջաբանով և «ԿԱՑԾԵՐ» Բ. հատոր լիակատար։

Իւրաքանչիւրի բաժանորդագինն է 5 Շիլին։

Լոյս կ'տեսնեն ներկայ 1900 թիւ ընթացքում և անմիջապէս կուղարկուին բաժանորդներին որպէս «ՍԱՄՈՒԷԼԸ» եղաւ։

Բաֆֆիի միւս երկերը ունենալ ցանկացողները պիտի ուղղակի դիմեն մեզ։

Մեզնից կարելի է ստանալ նաև Խրիմեան Հայրիկի, Ծերենցի, Պետրոս Դուրեանի և ուրիշ նշանաւոր գրուածքներ։

Հասցէ։

MME. RAFFI,
47 Uxbridge Road,
London, W., England.

ՄԱՍԻՍ ՆՊԱՐԵՂԵՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Massis Grocery Co.
38 Hudson St., Boston Mass.

Մեր անցեալի փորձառութիւնը եւ Թիւրքիոյ հետ ուղղակի առևտրական ճիւղեր հաստատելը չատերու հետ մըրցելու դիւրութիւն կուտայ մեզ։ Մենք առևտրուի չատութեան մէջ կը փնտռենք մեր շահը։

Հետևեալ ապանքներու գները ապացոյց են մեր խօսածին, Ուստրի պատուական պլղուր և ծեծած 3 սէնթ փաունտը կորկոտ 6 ս. պամեա 25 ս. աղցուած կարմիր ոսպ 6 ս. չաղցուած 5 ս. սիսեռ 5 ս. ղերիա և մագարօն 5 ս. սալցա մեծ քան 23 փոքր 6½ ս. մուխաչար 3½ ս. սև զէյթին 9-10ս. խաշեր պանիր 32 ս. դահին հալվասի 15 ս. դահին 16 ս. աղը դրած տերև 10. թարմ պանիր, Կ. Պոլսէն եկած լօքում նա և տեղական լօքում, թիւրքի այէն եկած պաստրմայ, ֆըսթըխ, չեքեր լեպլեպի, լեպլեպի տեսակներովը։ պատէմ չէքերի, Տաճկաստանի մեղր, ուռուպ անուշ կարագ, զէյթուն եաղը (ամենալաւ) պաստեղ, ռօճիկ։ Զաման գինձ քիմիոն, կարմիր պիպէռ, հինա, խոռնկ, խահվէի տէիրմէն, ճագվաներ։ Թուլումներ, նարկիլաներ, մանր աղցուած սուրմ գրի թուղթ, սիկարի թուղթ (Հիւանդանոցի)։ Սեղանի և փիանոի մետաքսեայ ծածկոցներ, ընծայի վերաբերեալ այլ եւ այլ մետաքսեղէնք։ Զանազան տեսակ փարուճներ։ Հոս պատրաստած ամենալաւ պաստրմայ 30 ս. փաունտը։ 3 պալերէն աւելի ապրանք գնողաց էքսբրէսը մենք կը վճարենք (միայն Պոստոն և շրջակայից համար) իսկ հեռի տեղերու համար 3 ս. զեղչ տալերին մեր առևտուրը կանխիկ է միշտ. դուրսերը C. O. D. կը ղրկենք. Հալէպի սապոն 5 ս. կտորը Կիրիտի սապոն 7 ս. կտորը։ Մեծ քանակութեամբ գնողաց մասնաւոր զեղչ. օրտրները չուտով կը ղրկուին ըստ կանոնի

ԿՈՒԶԷՔ ԿԱՂՈՒԱԾ ԳՆԵԼ

Անոնք որ քաղաքին մէջ կամ քաղաքէն դուրս որևէ կալուած գնել կուզեն թող դիմեն հետևեալ հասցէին միջնորդ արտի և տան վաճառումի։

J. H. DONELLY,
REAL, ESTATE
City and Country Property,
Room 37
476 Main St., Worcester, Mass.

Նմուշի համար հետևեալ օրինակը կուտանք—

1600 տօլարի, դիւրին պայմաններով Ուստրի մօտերը կալուած մը կը ծախուի որ ունի երկու երկ յարկանի տուներ, ախոռ մը, մեծ հանոց մը, բոլոր շէնքերուն մէջ վազուն ջուր. 16 գլուխ տավար պահելու խոտ, 460 քօտ փայտ, 100000 ոտնաչափ տեղի վրայ ատաղձեղէն և այլն և այլն.

ՀԱՑԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

(11 Բառլ փողոց Ուստր)

Շաբաթական պօրտը §1,75 ս. է իւրաքանչիւր ժուռմին երեք պնակ կերակուր կը տրուի, մսեղէն, բանջարեղէն և սառուլուզ. առաւօտները միայն գաւաթ մը կաթ, իսկ եթէ մէկը պրդոլայ կամ հաւկիթ ուտել ուզէ այն ատեն §2 պիտի վճարէ։ Կիրակի առաւօտները մէկ պնակ միսը պրդոլայ կը տրուի, նաև փելերը կը պատրաստուին 5 տեսակ, միս, պանիր, փայ, մրգեղէն և առատ հացանգործներ եթէ ժամանակին կանոնիս համեմատ ճաշի գան §1,50 միայն վճարելու են։ Սենեակ և կամ ամբողջ յարկի տուն ուզողները ինձի դիմելու են։ Այս հրատարակութեանս թող չի ցաւին ճաշարանապետները, քանզի ես իրենց պէս խոհարար կամ գործաւոր չեմ պահեր, բոլոր գործերը ես կընեմ ատոր համար կրնամ վերի գներով պահել ժողովուրդը. ով որ կուզէ համեղ կերակուր ուտել թող մեզի հրամէ։ Նաև ուտելու իւղ կը ծախեմ փաունտը 6 սէնթ։

Թադէոս Մամիկոնեան

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Տոքթոր Հ. Ս. ՃԷԼԱԼԵԱՆ, կառավարութենէն վկայեալ բժիշկ, իւր օֆիսին մէջ կը գտնուի

Կէս օրին 12 է մինչև 1.
Գիշերները 7 է մինչև 9.

Եւ պատրաստ է իրեն դիմող հիւանդ աղգայիները ամենայն խնամօք դարմանել։

Հասցէն է

DR. H. S. JELALIAN,
11 Dartmouth St., BOSTON.

ԳՐԱՎԱՃԱՌ
ԳՈՐԾԱԿԱԼ

Կուգամ ներողութիւն խնդրել ամէն անոնցմէ որք կամ հարցեր և կամ յանձարարութիւններ ուղղած են մեզ իսկ մենք մեր անձնական գործերու ատեն մը չափազանց խճողեալ ըլլալուն պատճառաւ անոնց պատասխանած չենք։ Այժմ որ դժուարութիւններէ ազատած ու գործերս ըստ ամենայնի կանոնաւորած եմ. ապահովաբար կրնամ ըսել թէ յետ այսու մեքենական կանոնաւորութեամբ իմ գործակալական պարտականութիւնները պիտի կատարեմ։ Կարգ մը գրբեանց յանձնարարութիւնը ուշանալուն մասնաւոր պատճառ եղաւ Վենետիկէն ղրկուած սնտուկի մը զարտուղելով՝ ատեն մը կորսուած մնալը։ Կը խնդրենք որ մեզի դիմողները համին իրենց հացէները յստակ ու ուրոյ գրել, երբեմն հացէներ երբէք չեն կարդացուիր։ Կը կրկնենք թէ մեր Գրավաճառական գործակալութիւնը կը շարունակենք կապ ունենալով թէ Թիւրքիոյ թէ Ռուսիոյ և թէ Եւրոպիոյ բոլոր հայ տպարաններու հետ։

Ընտանձնած եմ նաև Իրաւունքի գործակալութիւնը. ամէն անոնք որ կը փափաքին կամ հատով և կամ տարեկանով «Իրաւունք» ստանալ, կրնան դիմել ինձի դրամը կրնաք ղրկել Մնի Օրտրով։

Խ. Պետիշեան

Անձնապէս դիմել ուզողները կրնան գալ 99 Կօրհամ Փողոց

Նամակի հասցէն է.

360 P. O. Box,
Lowell, Mass.

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ
ՄԵԾԱԲԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱԲԱՆԱԿ
Ս. ՏԱՄՊՈՒՐԱՃԵԱՆ
Նիւ-Եորք 509 2 Բդ. Ավինիւ

Տեղական և Արեւելեան բազմատեսակ նպարեղէններ, լաւագոյն տեսակ ընդեղէններ, եղպնակին համեմատ բանջարեղէններ և առօրեայ թարմ միս։ Հայկական պանիր փաունտը 14 սէնթ, մեծ քանակ գնողաց 13 սէնթ. Ուստրի պատուական Պղլուր և Ծեծած փաունտը 4 սէնթի մեծաքանակ գնողաց զեղչ կընենք Զիթապտուղ (զէյթուն) փաունտը 10 ս. մեծաքանակ գնողաց մասնաւոր զեղչ կընեմ, 5 փաունտի քէն սալսայ հատը 25 սէնթ մեծաքանակ գնողաց 20 սէնթ հատը։ Մեր քով միշտ պատրաստ կայ Հայկական ամեն տեսակ ապրանքներ, ա՛ղը դրուած եափրաղ, ընտիր կորկոտ, անթապ հալվասի, կանանչ զէյթուն. Զէյթուն եաղի (ընտիր տեսակէն) մա՛քառոնի լօքում տեսակներովը, ոսպ աղցուած կամ չաղցուած, սումախ, սիսեռ Պոլսոյ խաշար պանիր, լէպլէպի չաքա՛րի տեսակներով, քիմիոն, անասոն, պատ՛տուական խունկ. աղուոր ալիւրէ հաց 2 հատը 5 սէնթ, և այլն... Նամակով ե՛ղած յանձնարարութիւնք փութով և քիչ վարձքով կը կատարենք մեր յատուկ կառքով։ Վճարումները կանխիկ են և ոչ ապառիկ։

Նաև կը ծախեմ Պամիեա, Խայսերիի Պաստրմա Սուճուղ և սիկարի թուղթ։

ԱԶԴ

Կը ծանուցանենք Հայ հասարակութեան թէ՝ Պոսթոնի Թայլըր փողոցին մէջ նոր խանութ մը բացած ենք, ուր կը վաճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵՂԷՆՆԵՐ ԶԱՓԱՒՈՐ ԳՆԵՐՈՎ։

Ցանձնարարութիւնք կը կատարուին փութով և խնամով։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ
ԱՐԱՄ ԱՍՓԱՆԱՋ

Մեր հասցէն է
Tyler Grocery Co.
113 Tyler St. Boston Mass.

ԿԱՐԻՈՐ ԱԶԴ

Ճաշակի յարմար պատուական ապուխտ (Խայսէրի Պաստրմայ) կը պատրաստեմ, գինն է՝ փաունտը 35 սէնթ. վաճառման կեդրոնատեղին՝

Տ. ՍԷՄԷՐՃԵԱՆ
113 TYLER st BOSTON MASS

---

231 Խթ 28 Բդ. Փողոց
ՆԻՒ-ԵՈՐՔ

Մ. Գալանճեան և Պ. Մուշեղեան։

Կը վաճառենք տեղական ու արևելեան ամէն տեսակ նպարեղէններ. Հօլսէյլի գնով. դիմեցէք մեզի անձամբ կամ նամակաւ։ Հուտով կը ղրկենք ուր որ ուզուի։

Ահա մեր գներուն ցանկը իւրաքանչիւր փաունտ սէնթի հաշուով. ձիթապտուղ 9. Ուստրի պուլղուր չատ մաքուր 3½. Հայկական պանիր 10. Լօքում չեքերի 10. Շամ ֆստիխ 26. Պամեայ 28. Ճերմակ ֆասիլեայ 5. Նուշ 18. Զամիչ 8. Սալոր 5. Խայսի 15. Ընկոյզ 14. Ֆնտիխ 13. Խուրմա 5. Լեպլեպու չաքար 20. Հինա 50 Տաճկական սօր 7. Սիսառ 5. Դաւին միս տեղս մորթուած 7. Խայսերի պաստրմայ և Սուճուխ 35. Թէ աղի և թէ անլի լեպլեպու 15. Լեպլեպուին ամենալաւը 28. սէնթ ամէն մէկ փաունտը։ Ունինք նաև Քիմիոն. Զաման. Տարչին. Լիմոն թուղի և տեղական ապրանաց ամէն տեսակը։

ԱԶԴ
ԸՆՏԻՐ ՊՈՒԼՂՈՒՐ

Ուստրի մէջ երկար տարիներէ ի վեր հաստատած ենք մեր յատուկ պուլղուրի գործարանը։ Սոյն գործին մէջ մեծ փորձառութիւն ունենալով, ամենայաւ ցորենէ կը պատրաստենք ընտիր պուլղուր, որ իր մաքրութեամբ և ուրիշ լաւ յատկութիւններովն՝ տանտիկիններու և ճաշարանապետներու գնահատութեան արժանացած է։ Կը պատրաստենք նաև նոյնպէս ընտիր ծեծած և կորկոտ։

Ուստի ամեն ով որ կուզէ ընտիր և ախորժահամ կերակուր լինելու պուլղուր և ծեծած ունենալ, թող դիմէ ուղղակի մեզ։ Ապսպրանքներ փութով կը կատարուին. մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել հետեալ հասցէին։

Ուստըր, Պուլղուրի Միացեալ Ընկ.
151 Իւնիրն սթ., Ուսթըր Մասս.

Տաճկական տեսակ տեսակ ապրանքներ ալ կը ծախենք։

Պատիւ ունի ծանուցանել արդի հասարակութեան թէ իւր վաճառած ըմպելիքներն ոչ՝ միայն փորձեալ և անխարդախ են, այլ և դիւրամատչելի են ամէն դասակարգի անձանց.

Այս վաճառատան մէջ կը ծախուին Եւրոպական, տեղական, Քալիֆորնիայի և տաճկական ամէն տեսակ ուիսքի, օղի, դինի, շամբանիա, մասթիքայ, գարեջուր, պրանտի, ափսինթ և այլն, իրենց ամեն տեսակներովն։

Փափաքողաց դներու ցուցակը ղրկուի առանց ո՛և է ծախքի։

Ցանձնարարութիւնք կը կատարուին ամենայն ճշդութեամբ եւ՝ փութով։ Քաղաքին մէջ ապրանքներն տուն կը ղրկուին, իսկ քաղաքէ դուրս ղրկուածներուն ծախքը գնողներուն վրայ է։

Ըմպելիքներ կը վաճառուին թէ՝ մեծ և թէ՝ փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գներով։ (Հօլսէյլ անտրիթէյլ)

Մեր յամախորդք երբ չի հաւնին իրենց գնած ըմպելիքներուն, յանձն կառնենք զայնս փոխել, եթէ պակսած ու ինասուած չըլլան։

Ըմպելիքներ կը վաճառուին շիշով, կալընով, տակառով և յատուկ սնտուկներով որք կը պարունակեն 12 կամ 24 շիշեր։

Դիմել յիշեալ հասցէին կամ
Յ. Խ. ԽԷՐՊԷԿԵԱՆ,
535 ՈՒԻՍԹ 57Բդ Փողոց, Ն. Ե.